

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, ապրիլի 8-ին, ինժեներ

ԱԼԵԲՍԱՆԴՐ ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵԱՐԱԼԵԱՆՑԻ

Կողմում տեղի ունեցած մահվան 9-րդ օրը, Թիֆլիսի Թանգուբան եկեղեցում, որ դե-
մակում է բէալական ուսումնարանի հանգէլ, կը մատուցվի պատարագ եւ կը կատար-
վի հոգեհանգիստ, որի մասին հանգուցեալի եղբորորդին՝ Գրիգոր Զաքարեան Եարա-
լեանցը յայտնում է իր բարեկամներին եւ ծանօթներին: Պատարագը կը սկսվի ժամի
10¹/₂-ին, իսկ հոգեհանգիստը—12-ին:

Կիրակի, ապրիլի 8-ին,

ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԻՐԱՅՅԵԱՆՑԻ

Մահվան տարեկիցի օրը՝ Մոռնու ա. Գեորգ եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ կը
կատարվի հոգեհանգիստ: Պատարագի սկիզբն է 11 ժամին, իսկ հոգեհանգիստը—
12¹/₂-ին:

Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը պատիւ ունի յայտնելու,
որ, ապրիլ ամսի 8-ին, ա. Նշան եկեղեցում, պատարագից յետոյ, դպրոցի բարերար

ՅՈՎՍԷՓ ԷՖԵՆԴԵԱՆՑԻ

հոգեհանգիստը կատարվելու է Վանքի մայր-եկեղեցու գաւթում: 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերակրօրեայ դե-
րոյց: Անբերրիութիւնից վնասվածների օգտին.
Հայոց ներկայացուցիչ. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—
ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐ.
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Զանազան ճանապարհներից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՍԻՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Զատիկի տօներին ինձ այցելեց մի ծանօթ,
որին վաղուց չէի տեսել: Նա ինչ-որ գործեր
էր վարում զանազան քաղաքներում, շատ ճա-
նապարհորդել է, շատ բան տեսել ու լսել:
—Ի՞նչ կայ, ի՞նչ չէր կայ:
Եւ սպասում եմ թէ ահա ծանօթս բաց կանէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԶԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՑ

Ն օր ալ է պ *

Է՛լ ի՞նչ օձեօկօյի

Շատ տարիներ են անցել այն ժամանակից,
կրք քոյր կլարան սահմանափակից իր կեանքը
զթոթիւն եւ աղօթք խօսքերով ու, բոլոր-
վին դէն գցելով ճեւա եւ բախտաւորութիւն
զաղափարները, փոխարինեց նրանց ուրիշ դա-
շափարներով, այն է՝ Աստուած եւ անձնուրա-
ցութիւն:

Շատ տարիներ են անցել այն ժամանակից,
կրք նա սկսեց քաղել կեանքի անդամատնից
միմիայն այն ծաղիկները, որոնք իբր սփոք-
ման ժպիտներ փթթում էին նրա հայեացքի
եւ ձեռքի տակ հիւանդանոցի մահիճներում
կամ իբր երկնային միասնական ընդմիջներ
լցնում էին նրա հոգին տաճարի աղօթքներով
ի վնձ անդորրութեան մէջ կամ կուսանոցի

*) Եւսեբիոս բնագիրը ձեռքի տակ չունենք. օգտվում
ենք Երեք տասնութ թարգմանութիւններից («Восточ.
Ист. Лит.», «Рус. Мысль» և «Миръ Божій» ամսագիր-
ներում):

պատմութիւնների տուար. թէ որտեղ ինչ
առեւտրական ձեռնարկութիւն է սկսվել. ո՞ւմ
ֆանտանն է այժմ խփում եւ այդ խփելուց
որքան չափ է սպասվում. թէ ի՞նչ իւզակի
ամուսնութիւն է կատարվել եւ ինժեներների,
ընկերութիւնների ակցիաները ի՞նչպէս են գին
դնում:

Բայց ծանօթս չէր փոխվել: Առանց այլ եւ
այլութեան նա էլ իսօք բացեց մեր Աւսթա-
նազեան ազգին (ինչպէս նա սիրում է անուա-
նել հայերին) ներկայ կացութեան մասին: Եւ,
ինչպէս միշտ, նրա բերանից դուրս թափվեց
զանգատների մի ամբողջ տարափ: Իմ առջեւ
նստած էր սեւ սերտիկ հագած մի բերդական
երեմիա:

Ո՛րք ենք մենք դիմում.—Դէպի անկում,
դէպի ոչնչացում.—Ի՞նչ անենք, որ այդ վախ-
ճանը չը ցոյց տար.—Ոչինչ:—Ի՞նչ է մեր գրա-
կանութիւնը, մեր թատրոնը.—Ոչինչ:—Ի՞նչ է
մեր բազմաթիւ հարցերի դրութիւնը.—Եկեղե-
ցութիւն:

Եւսեբիոս... Աշխատանքներից եւ տնտեսութիւններից
նրա նիհարած դէմքը ծածկվել էր այնպիսի թա-
փանցիկ գունատութեամբ, որ կուսական գլխա-
նոցի խորին ստուերի տակ նա նուրբ նշխարքի
տպաւորութիւն էր գործում, եւ նրա յիշողութիւ-
նը պոկէպոնոնկ լցվել էր այն մարդկային տա-
նապանքների եւ զոհերի յիշատակներով, որոնց
վրա նա գործ էր դնում իր հոգու եւ մարմնի
ոյժերը. բայց դեռ երբեք նրա հոգին այնպէս
չէր ցնցվել եւ կամքը այնքան ուժգին լարվել,
ինչպէս այդ օրը: Երբ նա իրան ուղեկցող քոյր
Բէնիգնայի հետ գնում էր հարթ մայրի վրա-
յով, մեծ քաղաքը ետում էր նրա շուրջը, լի
նախերիկոյան մեղմ պահվան աղմուկով եւ
շարժումով: Զորս կողմը դղրդում էին անթիւ-
անիւներ, փողփողում էին գոյնզգոյն զգեստ-
ներ եւ երեւում հարկւրաւոր դէմքեր փայլուն
աչքերով եւ ծիծաղող ու խօսող չրթոնքներ
երգի իսկ նա գնում էր արագ, անձայն քայլե-
րով, սիրտը խռովված եւ միտքը հոգեբանով պա-
շարված այն բանի շնորհիւ, որ նա կրել էր
անցեալ գիշեր եւ որ կրելու էր այժմ:

Ամբողջ անցեալ գիշերը նրա աչքի առաջ
հիւանդանոցի մահճի բարձի վրա թրպրտում
էր գեռ ջահէլ, բայց սարսափելի մաշված մի
կանացի գլուխ, հովանաւորված սեւ ու խիտ
մազերի թուխպանման մուգ գանգոսներով,
այդ կինը մեկնում էր դէպի նա չորացած մատ-

ցական, դարոցական, երէցիկական եւ այլն,
եւ այլն.—Ոչինչ...

Հարցեր է տալիս եւ վճռում: «Ոչինչները»
թափվում են գետի նման. եւ պարտաւորված
եմ լսողի դերում մնալ: Եւ մտածում եմ. «Ահա
ծանօթս կը վերջացնէ իր «ոչինչ»-ների ան-
սահման շարքը եւ դրանով էլ կը բաւականա-
նայ, ինչպէս սովորական է»:

Բայց ոչ... Ծանօթս միայն մի բանի մէջ էր
փոխվել: Այս անգամ նա բերել էր ոչ միայն իր
«ոչինչ»-ները, այլ եւ նրանց վճիռը: Գտնվել էր
մեր բոլոր դուրերի ճարը:

Վերջապէս:

Եւ լարում եմ ուշադրութիւնս: Եւ ծանօթս
քափ ու քրտինք մտած՝ բացատրում է ինձ որ
մեր բոլոր «ոչինչ»-ները պատճառ... կուսակ-
ցութիւններն են:

—Այո, կուսակցութիւնները, շնչեղ նա մի
ձայնով, որի մէջ կասկածի նշույլ անգամ չէր
նկատվում:

Եւ չեմ նկարագրի թէ ինչպէս էր նա ապա-
ցուցանում այդ դուրը: Վերցրեք մի որ եւ է
պատահական բան, դրեք ձեր առջեւ եւ ասա-
ցեք թէ այդ բանը ձեզ համար կը լինի պատ-
ճառ: Այնուհետեւ խմբեցեք այդ բանի շուրջը
ինչքան կամենում էք վատ, սեւ բան: Եւ կը
ստացվի մի շատ յուզիչ տեսարան. ճարը մէջ
տեղ, ցաւերը նրա շուրջը բոլորված:

Դենք թէ ձեր ընտրած բանը հէնց այն է,
ինչ գործ էր անում իմ գատական այցելուն
—«կուսակցութիւն»: Եւ տեսէք ի՞նչ կախար-
դական պանօրամա կը բացվի:

Ամենից շատ մեր ազգային սրտացաններին
տոյրում է, ի հարկէ, մեր բազմաշարքար
գրականութիւնը: Այստեղ «ոչինչ»-ներ—որքան
կամենաք: Ուրեմն այստեղ երկնային նեկտարի
պէս պիտի լինի այն բանը, որ յիշատակեցի—
«կուսակցութիւն»:

Գրականութիւնը—սա հազար անգամ ծա-
ծնված ճշմարտութիւն է—չէ կարող լինել
առանց կուսակցութիւնների, ուղղութիւնների,
բանական, դրօշակներ—որտեղ չեն եղել դրանք,
մարդկային որ գործերի մէջ չեն դեր կատարել:
Վերցրեք բոլոր ժամանակները, վերցրեք բոլոր
մարդկանց...

Իսկ մեզանհամ:

Ձէ երեւում մի շնորհալի դրող. դրա պատ-
ճառն այն չէ, որ շնորհք չը կայ, այլ այն, որ
կայ կուսակցութիւն: Գործը անարժան է. դրա
պատճառը այն չէ, որ անարժաններն են դուրս
հանկ հայոց գրականութեան ապագայը, այլ
այն, որ այդտեղ կայ կուսակցութիւն...

Միշտ եւ ամեն տեղ նա, այդ կուսակցու-
թիւնը: Հայ հասարակութիւնը գիրք չէ կար-

ներով անարիւն ձեռները եւ նրա ձայնը,
դուրս գալով ծանր չնչող կրճէից եւ չրթոնք-
ներից, որոնց գեղեցիկ գծերը չէին կարողացել
աղաւաղել նոյն իսկ մահամերձիկ տանջանք-
ները, խոստով չընկնելով ասում էր քոյր կլա-
րային:

—Գնա նրա մօտ, քոյրիկ, գնա, խնդրի, որ
ների, որ ասի ձեզ, թէ ներել է:—Նա պէտք է
շատ տանջված լինի... Այժմ եւ հասկանում
եմ, թէ ինչպէս էր նա տանջվում, այժմ, երբ
եմ նրան խնդրել ոչ միայն, որ ների... Գոյ-
րիկ, դու, գուցէ, սարսափես, երբ որ իմանաս,
թէ ինչ եմ խնդրելու... Ձը լաված, հրէշային
բան է, որ այսքան մեղաւոր եղողը դեռ հա-
մարձակի այդպիսի խնդրելով դիմել... Բայց
ինձ ուրիշ էլ չէ մնում... եւ չեմ կարող մեռ-
նել պահելով սրտումս այդպիսի սարսափելի
անհանգստութիւն: Փոքրիկիս վերաբերմամբ...
կը փորձեմ... Գուցէ նա խղճայ փոքրիկին եւ...
Գնա, քոյրիկ, խնդրի նրան... Ասա, որ ոչ մի
մեղք չունի այդ փոքրիկ սիրուն եւ անտէր
երեխան... Դու տեսար նրան երէկ: Ժիշդ չէ,
որ կատարեալ հրեշտակ է: Ողորմելի մի որդ,
որին ոտով կը տրորեն ամենքը... Բայց ի՞նչ
եմ ասում, չէ որ դու ոչինչ չը գիտես, դու
չես կարող հասկանալ, թէ ինչ եմ ուղղում եւ
քեզինք եւ նրանից... Կոացիր, լսիր... Եւ

դու, բաժանորդ չէ դրվում լրագրին, եւ դրողը,
բնականաբար, քաղցած ու ձեռքերը կրճէին
ծալած է,—պատճառը այն չէ, որ մենք ընթեր-
ցողներ չունենք, որ լրագրին, գրքին փող
տուողներ չը կան, այլ այն, որ կուսակցու-
թիւն կայ:

Պատճառներ մի որոնէք: Ինչներեղ է հաս-
տատ, իրական պատճառը: Փակեցէք ձեր աչ-
քերը, խցեցէք ձեր ականջները եւ մի գլուխ
դռնացէք. «կուսակցութիւն», նա է մեր հոգին
հանում:

Պրծաւ գնաց...

Ձգուելի է այն մարդը, որ հաւատած է թէ
իր դժբախտութիւնների միակ պատճառն այն
է, որ ինքը մեռած չէ, այլ ապրում է: Կու-
սակցութիւն չը լինի, այսինքն կեանք չը լինի:
Բայց ի՞նչ լինի դրա տեղ:

Մի բորբոսնած ճահիճ, որի մէջ ամեն ինչ
փառաւոր ու գեղեցիկ համարվի: Կը գտնվի մի
ստոր սողուն, որին ամեն մի պատաւոր տեղ
պարտաւոր են դուրս չարտել, բայց դուք չը
պիտի դիպչեք այդ սողունին, որովհետեւ նա
կասէ թէ կուսակցութիւնն է այդպէս անում:
Համարձակեցէք չընդունել, որ այս ինչ մեծա-
միտ հայը ոչնչութիւն չէ եւ իսկոյն կուրծք կը
ծեծեն. «կուսակցութիւն», կուսակցութիւնն
այդպէս արաւ: Գնաղաղացեցէք մէկին, ցոյց
տուէք որ նա բթամիտ հեղինակ է, անընդու-
նակ թարգմանիչ է, դարձեալ նոյն օրհասական
աղաղակները. «կուսակցութիւն», կուսակցու-
թիւն»...

Անցէք միւս երեւոյթներին:

Կղերը անբարոյական է, չահաճով, պատրաստ
է ամեն ինչ վաճառքի հանել: Պատասխանում
են, «կուսակցութիւն»:

Հասարակական պաշտօնեան հաշիւ չէ տալիս—
«կուսակցութիւն»: Նա փողեր է կլանում—
«կուսակցութիւն»:

Մպուտ մի հանէք անընդունակութեան մա-
սին: Մի ասէք թէ փողեր են վատնում: Մի
ասէք թէ կան հասարակութեան աչքերը փա-
կոցներ, նրա միտքը պոռնկացնողներ: Թողէք
որ գողն ու աւաղակը, սրիկան ու մօր ծիծը
կտորը անպատիւ կման, նոյն իսկ փառաւոր-
վին, նոյն իսկ ազգային պարծանք ու փառք
հրատարակեն:

Ամեն ինչ լաւ է այս աշխարհում: Վատ,
անաքանդ է միայն մի բան—կուսակցութիւնը:

Հայը կարող է մարմնացած անբարեխղճու-
թիւն լինել, հայը կարող է քնել առասպելա-
կան հրէշի նման կամ լափել իր նմանների՝
իր փորին երջանկութիւն պատճառելու համար:
Եւ հայը դիտէ, շատ լաւ դիտէ, որ այդ բոլո-
րի պատճառը կուսակցութիւնն է:

արդէն խոտոտվանվել եմ, քահանան թողու-
թիւն տուեց մեղքերիս... Այժմ դու լսիր, քոյ-
րիկս, որ իմանաս, թէ ինչպէս է մեզ պատ-
ժում Աստուած...

Նա սկսեց լալ եւ լսող հեկեկալով աւե-
լացրեց,—եւ թէ ինչ պէտք է ասես նրան...
Ինչպէս պէտք է խնդրես...

Հիւանդի ձեռքերը, որոնք կարծես դիակի
ձեռքեր լինէին, այնքան պինդ քաշեցին նրա
չորը, որ նա ստիպված եղաւ ծռնել չոքը մահ-
ճակալի առաջ, ու շուտ շուտ նա ստիպված էր
լինում թեքել ականջը դէպի հիւանդի երեսը:
Նրա ասածները լսելու համար Գիշերային լամ-
պը հանգչելու վրա էր. քոնքը փակել էր նոյն
իսկ շատ սաստիկ տանջվող հիւանդների կողմ-
քը: աղօթարանի լույսը ներս էր թափանցում
պատուհաններով, քոյր կլարայի ճակատը
ծածկվել էր քրտինքի կաթիլներով, իսկ հի-
ւանդ կինը դեռ եւս խօսում էր, պատմում էր,
զանգատում էր իր ճակատագրից, մարդկան-
ցից ու ինքն իրանից, քանի դնում աւելի ու
աւելի պակաս գիտակցելով իր ասածը եւ աւելի
ու աւելի չաղված լեզուով եւ մերթ սկսելով
հեկեկալ, մերթ սկսելով նշովքներ արտասանել,
անիճել կեանքը, իր սեփական սիրտը եւ այն
մարդուն, որ հրապուրել էր նրան անհուն եր-
ջանկութեան ուրուականով եւ այնուհետեւ
գցել անյատակ թշուառութեան անդունդը:

Առաջ գնացե՛ք եւ շարեցե՛ք էլի ցաւեր։
Երկրաշարժ պատահեց—պատճառը կուտակ-
ցութիւնն է։ Գիւղացին քաղցած է—դարձեալ
նոյնն է պատճառը—Որբերը կոտորվում են
քաղցից—ուրիշ մի պատճառ չը կայ։

Այսպէս գնալով, մենք կը հասնենք այն
դրութեան, երբ տեսնելով ինչպէս է երկնքից
կարկուտ թափվում, կասե՛նք որ պատճառը էլի
կուտակցութիւնն է։

Եւ որովհետեւ կուտակցութիւններ կան, ի՞նչ
է մնում որ անենք։

Լաց լինենք, գլուխ ծեծենք, գուցէ կարելի
լինի մեր կեանքի այդ փոքր ի շատէ կենդանի
նշաններն էլ խեղդենք, ոչնչացնենք։

Մնաւ բարեւի ժամանակ իմ ծանօթը ոգե-
ւորված էր ու բախտաւոր, ինչպէս ամեն մի
աղքատէր, որ գտել է ազգային ցաւերի հարցը։
Բայց ես նրան ասացի։

—Այո, ես այժմ հաւատում եմ, որ մեզինք
ոչինչ չի դուրս գալ...
Ինքներդ էլ դատեցե՛ք, ընթերցող։

Լ.

ԱՆՔԵՐԻՆԻՍԻՏԻՆԻՅԱՆ ՎՆԱՍԱՎԱՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք հետեւեալ նոր նութարարութիւն-
ները.

Բա գ ու՝ պ. Մ. Պապաշանեանից, ի յիշա-
տակ իր հանգուցեալ մօր, Նիկոլայի Պապա-
շանեանի, 100 բութի։

Թ ի ֆ ի լ ա՝ տիկին Մ. Խատիսեանից 10 բ.։
Ընդամենը 110 բ., որ նախկին 2561 բ. 64
կօպէկի հետ միասին կանէ 2671 բ. 64 կօպէկ։

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ուրբաթ, ապրիլի 6-ին, Արտիստական ըն-
կերութեան թատրոնը ծայրէ ի ծայր լինել էր
հայ հասարակութեանը։

Երիտասարդ Գալֆայեան, որին կանխել էին
ամենահակասական լուրեր, խաղալու էր առա-
ջին անգամ բեմի վրա եւ խաղալու էր Շէքս-
պիրի «Համլէտը», որի ծանրութիւնը շատ քիչ
ուսուր են կարողանում տանել նոյն իսկ շատ
տաղանդաւոր եւ շատ փորձված դերասաննե-
րից։

Հաւանալի է, որ հասարակութիւնը սպա-
սում էր ներկայացման մեծ անհամբերութեամբ,
սրտատրոփ։

«Լինել թէ չը լինել» պէտք է վճռվէր այդ
երեկոյ բեմի վրա ոչ միայն խեղճ դանիական
իշխանի, այլ եւ երիտասարդ սկսնակի համար։
Եւ այդ հարցը Գալֆայեանի վերաբերմամբ,
իմ կարծիքով, վճռվեց անպայման դրական
մտքով։ Պ. Գալֆայեան պէտք է լինի բեմի
վրա, որովհետեւ նրա մէջ անկասկած կայ աս-
տուածային կայծ, իսկ երբ խօսքը դէբիւտան-
տի, սկսնակի մասին է, այդ է գլխաւորը, այդ
է էականը։

Տաղանդը, մանաւանդ անփորձ տաղանդը
չափվում է ոչ այնքան իր սխալներով, որքան
իր արժանաւորութիւնների աստիճանով։ Մի
երիտասարդ բանաստեղծի ոտանաւորների մեծ
մասը կարող է քննադատութիւնից ցած լինել,
բայց եթէ նա ունի մի քանի ոտանաւոր, ո-
րոնք միջակութիւնից շատ բարձր են, այդ բա-

Բայց ինչի մասին էլ լինէր խօսքը, նրա չըր-
թունքները, կարծես մի փչից անընդհատ խոց-
վող սրտի զրօքմամբ, շուտ շուտ կրկնում էին
«Երեխա» բառը, որից յետոյ իսկոյն եւ եթ
նա սկսում էր նորից աղաչել բարեբաղձ չըն-
չառութեամբ եւ լացալիկանք աչքերով։

—Գնա նրա մօտ, խնդրիր Դու Գրիստոսի
սպասաւորն ես, իսկ Գրիստոս պատուիրել է
փրկել կողոնդներին... Ասա նրան, որ Գրիստոս
պատուիրել է ներել, որ նա ներեց մեղաւոր
կնոջը... որ նա սիրում էր երեխաներին...
Թող նա խղճայ փոքրիկ որդիակիւն ու վերջին
նրան զետեղի, որպէս զի ոտների տակ չը տրո-
րեն նրան... Նա կարող է այդ անել... միայն
թէ ուղեկցայ նա հարուստ է։ Ես հեռուից տե-
սայ նրան... Նա այնքան զօրեղ է, առողջ է...
մարդիկ գլուխ են իջեցնում նրան... ամեն
կողմից գլուխ են իջեցնում... ոչ մի վիշտ չէ
երեւում նրա երեսին... իսկ ես։ Օ՛հ, Տէր
Աստուած... Բայց իմ մասին չարժէ խօսել։
Հարցը իմ մասին չէ։ Իմ արդէն անցել է. ինձ
համար ամեն ինչ կորել պրծել է...
Նա նորից լաց եղաւ։

—Բայց երեխա, իմ ուկէ աստղիկը։ Գնա նրա
մօտ, քոյրիկս, խօսիւր երեխայիս մասին, խնդ-
րիւր երեխայիս համար։ Պատմիր, թէ որքան
խեղճ եմ ես եւ որքան փոքր ու սիրուն է
անմեղ երեխան...

«Իական է տաղանդը ողջունելու համար։ Նոյնն
է եւ բոլոր գեղարուեստագէտների վերաբեր-
մամբ։

Այդ տեսակէտից ես ի բոլոր սրտէ ողջու-
նում եմ պ. Գալֆայեանին, որ, առաջին ան-
գամ խաղալով «Համլէտը», նոյն իսկ առաջին
անգամ լուրջ կերպով բեմ դուրս գալով, կա-
րողացաւ մի քանի տեսարաններ խաղալ կա-
տարեալպէս գեղարուեստորէն, ցոյց տալով եւ
լուրջ դերեր խոր ըմբռնելու ընդունակութիւն,
եւ ըմբռնած չնորհալի կերպով ներկայացնե-
լու ձիրք։

Ինձ առանձնապէս դուր եկան դանիական թա-
գաւորի լուսնների հետ խօսակցութիւնը, երբ
Համլէտը առաջարկում է նրանց սրինգ անել,
եւ Պօլօնիուսի սպանութեան տեսարանը։

Թիչնի արդեօք, որ պ. Գալֆայեան չէր թա-
փանցված այն խոր վշտով, որ յատուկ է Համ-
լէտին, թուել արդեօք թոյլ խաղացած տեղե-
րը։ Չարժէ, իմ կարծիքով։ Այդպիսի տեղեր
չառ կային (մանաւանդ սկզբում եւ վերջում),
եւ ուղղակի տարօրինակ կը լինէր, եթէ չը լի-
նէին։ Սակայն այդ բոլորը հեշտ է ուղղել ա-
պագայում, եթէ պ. Գալֆայեան անցնի լաւ
դպրոց, որից յետոյ միայն կարող է վճռվել եւ
նրա ամպլուան։

Հասարակութեան փոքրամասնութեան հա-
մար, որ զժգոհ մնաց ուրբաթ օրվայ ներկա-
յացումից, որովհետեւ պ. Գալֆայեան տեղ տեղ
տարօրինակ կերպով էր խաղում, գուցէ աւել-
ւորդ չը լինի ինչիւ, որ երիտասարդ դերասանը
հետեւում է իր խաղում, եթէ չեն սխալվում,
իրվիչդին,—որքան աղող, այդ ուրիշ հարց է։
Ինչ վերաբերում է հանդիսատեսների մեծա-
մասնութեան, նա, ըստ երեւոյթին, շատ գոհ
մնաց ներկայացումից,—պ. Գալֆայեան վար-
ձատրվեց բոլոր ծափահարութիւններով եւ
նոյն իսկ ասացաւ երկու պատի։

Միւս դերակատարներից յիշելու է պ. Ամ.
Մանդինեանին, որ վատ Պօլօնիուս չէր եւ շատ
լաւ գերեզմանափոր էր, եւ օր. Ուիթարեանին,
որ, թէեւ միմիայն մի վայրկեան,—եղբորը ճա-
նաչելու օրպէս,—տպաւորութիւն գործեց հա-
սարակութեան վրա։

Ուրբաթեան մը յայտնում ենք նոյնպէս, որ
պ. Մասեհեանի թարգմանութիւնը, որ, կար-
ծեմ, առաջին անգամ էր բեմ տեսնում, պատ-
ւով դուրս եկաւ փորձից։ Նա նոյնքան հաճոյ-
քով է լսվում բեմից, որքան հաճոյքով կար-
դացվում է դրժում։

Տ. Յ.

ՆԵՐԿՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են յիշեցնել, որ ապրիլի 8-ին,
ժամի 1-ին, առաջին արական գիմնադիայի նոր
չինութեան մէջ կը կայանայ երկրորդ ժողովը
այն անձինքներից, որոնք հասարակական գրա-
դարանում մարտի 21-ին խորհրդակցում էին
Թիֆլիսում Մօսկվայի Կայսերական Հնագիտա-
կան ընկերութեան բաժանմունքի հիմնադրու-
թեան մասին։ Նիստի առարկան կը լինի բա-
ժանմունքի կանոնադրութեան նախագծի քնն-
նութիւնը։

Երաշտութեան եւ սաստիկ չոքի պատճառով
Մուղանի եւ Ղարաբաղի դաշտերում խոտը

Եւ անա մայիսեան օրվայ իրիկնասպանի-
քով կլարան գնում էր այդ մարդու մօտ
Վերջալոյսի շողքը երբեմն երբեմն վարդազոյն
չերտեր էր գցում նրա ձիւնանման սպիտակ
գլխանոցի վրա, եւ նրա շուրջը աղմկում էր
մեծ քաղաքը ու սպիտակ ակացիաները սփռում
էին իրանց բուրմունքը։ Նրա կողքին կտկա-
ւով քայլում էր Թիֆլիսեւէ ու առողջ քոյր
Բէնիգնան, որ երբեմն երբեմն բարձրացնում
էր զէպի նա իր բարի աչքերը հարցական ար-
տայայտութեամբ։ Բայց քոյր կլարայի քնքոյշ
չըթունքները մնում էին խիված։ Նա չէր կա-
րող յայտնել ուրիշի գաղանիքը եւ պէտք է
մենակ, միմիայն իր ոյծերով կէր պարտակա-
նութեան եւ զթութեան խաչը։

Իսկական խաչ։ Միմիայն այն միտքը, թէ
ու՜մ չիմքն է նա ոտ գնելու եւ ու՜մ հետ է խօ-
սելու, յուզմունքը ու ամօթ էր ազդում նրան եւ
մանաւանդ զգուշացնէր, որ նա աշխատում էր
գապիկ, բայց չէր կարողանում։ Նա գիտէր, որ
ինքը իրականը չունի ոչ ոքի դատել կամ դա-
տապարտել, ուստի եւ մաքառում էր զգուշանքի
հետ, որ դեռ եւս մնում էր նրա սրտում,
վրդովելով նրա անդորրութիւնը իբր մեղա-
կան մի բան։ Իր կոչման եւ իր կատարած
պարտականութիւնների չնորհիւ նա յաճախ
չիվում էր մարդկանց հետ, եւ նրա ականջին
արդէն մէկ երկու անգամ զէպի էր այդ տա-

չորացել է, այնպէս որ այնտեղ արածող անա-
սունները քաղցած են մնում։

Երկրագործութեան եւ պետական կալուած-
ների միմիայնութիւնը Անդրկովկաս է ու-
ղարկում անտառային ղէպարտամէնտի փոխ-
գործակալ Բառնէրին, որպէս զի նա հետազո-
տէ այն տեղերը, որոնք շարունակ վնասներ
են կրում լեռնային հեղեղանքներից։

Բազուի հայոց Մարգարիտական ընկերու-
թեան վարչութիւնը, «НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրա-
գրի խօսքով, մի ուղերձ մատուցեց պ. Աս-
տուածատուր Կաճկաճեանին, որին ընդհա-
նուր ժողովը այդ ընկերութեան պատուաւոր
անդամ ընտրեց։ Վարչութեան նախագահ պ.
Սամսոն Յարութիւնեան, մատուցանելով ու-
ղերձը, մի համառօտ ճառի մէջ յիշեց պ. Կաճ-
կաճեանիցի մատուցած ծառայութիւնները Մար-
գարիտական ընկերութեանը եւ տառապանե-
րին, որոնց ընդառն վիճակը թեթեւացնե-
լուն է նուիրել պ. Կաճկաճեանց իր ամբողջ
կեանքը։

Նկատի առնելով, որ համայնական հողա-
տիրութեան իրաւաբանական ձեւը արդեւք է
հանդիսանում գիւղացիներին պարտէզներ եւ
այգիներ զցելու, նոյնպէս եւ թանգ արժեքող
բանջարանոցներ չինելու, երկրագործութեան
եւ պետական կալուածների միմիայնութեան
մէջ հարց է բարձրացրած, որ այսուհետեւ
գիւղացիներին արժեւանական հողեր բաժանե-
լիս ցանկացողներին տրվեն այդ հողերը իբրեւ
մասնաւոր սեփականութիւն։

Մօսկվայի քնազէտների ընկերութիւնը, ինչ-
պէս հաղորդում է «НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրա-
գրից, Կովկաս է ուղարկում իր անդամներից
մէկին, Մօսկվայի համալսարանի պրոֆեսօր Վ.
Վէրնադսկին, հանքաբանական հետազոտու-
թիւններ անելու եւ հաւաքածոներ կազմելու
համար Բազուի նահանգում։

«СѢВ. Кр.» լրագրից հաղորդում է, որ Եւ-
րասիայի քաղաքի դուռնան, մարտի 21-ի նիս-
տում, միաձայն որոշեց միջնորդել կառավա-
րութեան առաջ, որպէս զի վերացվեն գիւղա-
կան հասարակութիւնների վիճիւններով նշա-
նակվող մարմնական պատիժները։

Նոյն լրագրից հաղորդում է, թէ Կոյրերին
խնամող ընկերութեան խորհուրդը աչքաբոյժ-
ների մի խումբ է կազմակերպում, որ պէտք
է ուղեւորվի Գեօքչայի գաւառը հետազոտելու
համար այն պատճառները, որոնցից առաջա-
նում են աչքի լաճախակի հիւանդութիւններ
այդ գաւառի աղքատիւներին մէջ։

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՆԻՆԻՅԱՆ մեզ գրում են. «Նոր-
նախիջեանի Բարեգործական ընկերութիւնը
մտադիր է հրատարակել Գամառ-Գաթիպայի
հեղինակութիւնների երրորդ հատորը. (առաջին
երկու հատորները հրատարակել է տ. Վ. Քա-
նանեանը)։ Երրորդ հատորի մէջ կը մտնեն
մեր բանաստեղծի բոլոր անտիպ եւ կամ արւ-
ված, բայց առաջին երկու հատորների մէջ չը

դանդով, խելքով ու եռանդով հռչակված մար-
դու անունը։ Նա ոչ մի վատ բան չէր լսել
նրա մասին, բայց գիտէր, որ նա ապրում է,
խորապատկած հոգեկան այն յորձանքի եւ այն
թանձր մշտնի մէջ, որոնք այժմ սքօղում են
մարդկանց աչքից երկնքի տեսքը։ Եւ նա
պատկանում էր անշուշտ այն մարդկանց թիւին,
որոնք աւելի եւս զօրացնում են այդ յորձանքը
եւ խաղանքում խառն մշտնի իրանց յանդուգն
խելքով եւ եռանդով գործերի ու զուարճութիւն-
ների նուիրված կեանքով։

Խելք, տաղանդ։ Միթէ նրանք միշտ ջանքի
պէս լուսաւորում են ճանապարհը, որպէս զի
մարդիկ չը չըղկն այն շաւիղներից, որ գծել է
Աստուածային կամքն ու իմաստութիւնը։
Նրանք յաճախ,—թերեւս եւ այդ մարդու ձեռ-
քում,—այնպիսի կայծեր են լինում, որոնք
կասկածի եւ ըմբոստութեան հրդեհ են վառում
մարդկանց հոգու մէջ։ Յամենայն ղէպս, հաստատ
բան է, որ նա աշխարհիկ մարդ է եւ կեանքի
մի մասը անց է կացնում աշխատանքի մէջ, որ
հարստութիւն եւ փառք է տալիս նրան, եւ
միւս մասը՝ բերկրութիւնների մէջ, որոնցով աշ-
խարհը անուցանում է ճակատագրի եւ իր սի-
րիւնների զգայարաններն ու պարագութիւնը։
Քոյր կլարան լսել էր, որ նա այդում է փար-
թաւութեան մէջ, չըլապատկած այն գեղեցկու-
թեամբ, որ զգվում է զգալութիւնը եւ պաշ-

մտած թէ ոտանաւորները եւ թէ ազատ զըր-
ուածները։

ՄՆԱՍԻՅ մեզ գրում են. «Լիւսնօղեան
զպրոցի վարչութիւնը, ուղարկութեան առնե-
լով այն հանգամանքը, որ այս տարի զպրոց
աւարտող աշակերտներն ու աշակերտուհիները
չքաւորութեան պատճառով, համարեալ թէ ա-
ռանց բացառութեան, անկարող են ուսումը
շարունակել քաղաքային եւ Մարիինսկի ու-
սումնարաններում, վճեց միդասեան Լիւսնօ-
ղեան զպրոցը վերածել երկրպետան զպրոցի
չորս միացեալ բաժանմունքների։ Վարչու-
թեան այս վճիռը հաստատված է Թիֆլիսի
նահանգի ժողովրդական զպրոցի տեսչի կող-
մից։ Դպրոցի նիւթական դրութիւնը մնում է
անփոփոխ. նրա տարեկան հաստատ եկամուտը
հասնում է 1000 ռ., որից 600 ռ. Լիւսնօղեանի
կալուածից եւ 400 ռ. Թոշակից, իսկ ծախս
1100 ռուբլի։

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՆԻՆԻՅԱՆ մեզ գրում են. «Ն-
կեղեցական հողաբարձութեան ընդհանուր ժո-
ղով մինչեւ այժմ չէ գումարվում։ Պատճառը
պ.պ. հաշուետեսներն են, որոնք չարաթը մի ան-
գամ են ժողովում եւ մինչեւ այժմ չեն նայել
եւ ստուգել հաշիւները։ Հողաբարձուներն էլ
շարունակում են իրանց գործը արդէն 5—6
տարիներ, մինչդեռ ժողովը չէ նայում եւ չէ
ընդունում հաշիւները։ Ե՛րբ անհամ վէճերից
կը ձանձրանանք եւ գործ կը սկսենք։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից հեռագրում են «Morning Post»
լրագրին, թէ Սօֆիայում մակեդոնական կենտ-
րօնական լծիմաւորի նախագահին եւ աղքեցիկ
անդամներին կալանաւորելը շատ լաւ տպա-
ւորութիւն գործեց Իլիդ-Քեօսկում։ Բոլգա-
րական չըլմաներում խօսում են, թէ այս ղէպ-
քում բոլգարական կառավարութիւնը գործում
էր ոչ թէ Թիւրքիայի ճնշման տակ, այլ բա-
ցառապէս իր սեփական ցանկութեամբ վե-
րականցելու կարգը Բոլգարիայի ներքին գոր-
ծերում։ Բոլգարական կառավարութիւնը յոյս
ունի, որ Բ. Դուռն եւս իր կողմից գէթ որոշ
աստիճանի կարգ կը հաստատէ մակեդոնական-
վարչական հաստատութիւնների մէջ եւ կը
զաղարկեն անմեղ բոլգարների ձերբակալումը։

—Կ. Պօլսից հեռագրում են «Berliner Ta-
geblatt»-ին, թէ մակեդոնական յուզմունքները,
որոնք վերջացած էին համարվում, ընդհակա-
ռակը աւելի եւ աւելի տարածվում են եւ ան-
ցել են արդէն արեւմտեան արեւական չըլմա-
նոր։ Սօֆիայից նորերում Կ. Պօլսի վերա-
դարձած դիւանագէտներից մէկը հաւատացնում
է, որ Բոլգարիայում, սկսած միմիայններից
մինչեւ վերջին բանուորը, ամենքն էլ համա-
կրում են մակեդոնական շարժմանը, բարոյա-
կան աջակցութիւն են ցոյց տալիս նրան եւ
յայտնի կերպով կշտամբում են իշխան Ֆէրդի-
նանդին, որ նա չէ հասկանում այդ շարժման
նշանակութիւնը։

—«National Zeitung» լրագրին հեռագրում
են Կ. Պօլսից, թէ Եւրոպայի տեղեկութիւնները չըն-
տանալ աստիկ անհանգստութիւն է պատ-
ճառում Բ. Դրանը, որովհետեւ, լուրերին նա-
խով, այնտեղ տիրում է կատարեալ անիշխա-
նութիւն։ Հաղորդակցութիւնը Եւրոպայի հետ բո-

տելի է դարձնում նիւթը եւ նիւթեղներ։ Մըշ-
տական հոգսեր սին շահերի մասին, մշտական
ծառայումն նիւթական իրէպիւլս, աղմուկ, ամ-
բոյն, մարդկանց գովաւասանք—անա այն միջո-
րոքը, որ չնչում է, այն անուշադր, որով ապ-
րում է նրա հոգին, եւ որքան գոռոզ, որքան
ինքնագոհ պէտք է լինի այդ հոգին Անշուշտ
բայտաւորութիւնից գոռոզացած մի մարդ է
այդ, մէկը նրանցից, որոնք աղողութիւն ունեն
մարդկանց մէջ... Իսկ Աստուծու մօտ։ Վէպ
ձեզ, հարուստներ, որովհետեւ դուք արդէն
գտել էք ձեր միմիայնութիւնը։ Սակայն, թող
Աստուած լինի նրա դատաւորը...

Քոյր կլարայի համար անկասկած է միայն
մի բան,—մի փոքր եւս եւ ինքն ու նա կը
հանդիպեն իրար, զալով այնպիսի անհունա-
պէս տարբեր ճանապարհներից, որոնք կարծես
զանազան մոլորակների վրա են գտնվում։ Այդ
ճանապարհները այնքան զանազանվում են
իրարից, որ նրանցով քայլող մարդկանց մէջ
պէտք է լինի անհաւանականութիւնների մի
մարդով անուշադր։ Հայալ լինալպէ պէտք է
ինքը,—աշխարհիկ ընդուն չիմացող մի հեզ
կոյս,—խօսէ այդ մարդու հետ, որին «մարդիկ
գլուխ են իջեցնում ամեն կողմից», որի խօսքը
անշուշտ ճարտարութեամբ ծառայում է նեն-
գաւոր խելքին։

(Կը շարունակվի)

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27